ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ ФИЛОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF ARMENIAN PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Աբովյան 52ա Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52а 52a Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ 2024 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Գիտխորհրդի 2024-25 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:
2. 2024-25 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին ընթացիկ քննությունների նախապատրաստական ընթացքը (զեկուցող՝ Ա. Սարգսյան):
3. Հաճախումների ընթացքը ֆակուլտետում:
4. ԵՊՀ էլեկտրոնային համակարգում դասախոսների կողմից տեղադրվող նյութերի և պաշարների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:
5. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:
6. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում է 22-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի՝ 2024-25 ուստարվա աշխատանքային պլանը նախապես ուղարկվել է ամբիոնի վարիչներին՝ ծանոթանալու, քննարկելու և անհրաժեշտ դիտարկումներ անելու նպատակով: Գիտխորհրդի քարտուղար Լ. Մելքոնյանը ներկայացրեց ֆակուլտետի գիտխորհրդի 2024-25 ուստարվա աշխատանքային ժամանակացույցը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ առկա ուսուցման 1-ին ընթացիկ քննությունների կազմակերպման ընթացքը նորմալ է, հարցաշարերը նախապես տրվել են ուսանողներին, և քննությունները մեկնարկելու են հոկտեմբերի 28-ից: Ա. Սարգսյանը նաև տեղեկացրեց, որ բոլոր կուրսերի հետ նախապես քննարկվել և համաձայնեցվել է քննությունների գրաֆիկը: Ամբիոններն էլ իրենց հերթին դասախոսներին ուղարկել են

գրաֆիկները: Գրավոր քննությունների ժամանակ վերահսկողությունը մեծացնելու և արտագրություններից խուսափելու համար առաջարկվում է ներգրավել դոցենտների և պրոֆեսորների օգնականներին:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ ուսանողների հաճախումների պատկերը առանձին կուրսերում այնքան էլ լավ չէ, առանձին դեպքերում որոշ դասախոսներ ուշադրություն չեն դարձնում այդ հանգամանքին, և գիտխորհրդին հիշեցրեց, որ հաճախումների համար ուսանողները միավոր են ստանում, ուստի պետք է խիստ լինել այդ հարցում և հետևողականորեն նշանակել բացակայությունները: Խստացվել է նաև բացակայությունների սահմանային շեմը. Ուսանողը 40 ժամ բացակայելու համար ստանում է ֆակուլտետի նկատողություն, 60 ժամ բացակայելու դեպքում՝ ռեկտորատի նկատողություն, իսկ 80 ժամ բացակայելու դեպքում կարող է հեռացվել համալսարանից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մագիստրատուրայում ուսանողների մեծ մասը նաև աշխատում է, և առանձին դեպքերում ուսանողները, դրանով պայմանավորված, բացակայություններ են ունենում, գիտխորհուրդը որոշեց մագիստրատուրայում ուսանողների հաճախման համար տրվող միավորը սահմանել 1 միավոր, իսկ բակալավրիատում՝ 3 միավոր, ինչպես սահմանված էր նախորդ կիսամյակում:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ ուսուցման էլեկտրոնային E-learning համակարգում դասախոսները պետք է տեղադրեն իրենց վարած դասընթացների վերաբերյալ ուսումնական անհրաժեշտ նյութերը, դասագրքերը, հարցաշարերը, հատկապես դասընթացի վարման օրացուցային պլանը և հետևողականորեն հետևեն դրանց լրացմանը:

Օրակարգի 5-րդ հարցի մասին ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ հանրային քննարկման է ներկայացված ՀՀ՝ Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքի նոր նախագիծը: Այն ուղարկվել է բոլոր ամբիոնների վարիչներին՝ ծանոթանալու և առաջարկությունների համար: Նախագծի դրույթները ընդհանուր առմամբ ընդունել են, և գիտխորհուրդը որևէ առարկություն չունի:

Դեկան Ա. Գալստյանը գիտխորհրդին տեղեկացրեց նաև, որ փոխվել է ասպիրանտուրայի տեղեր պահանջելու կարգը: Նոր կարգի համաձայն՝ ասպիրանտի հավանական ղեկավարը պետք է ՀՀ Գիտության պետական կոմիտեի կայքում էլեկտրոնային հայտ լրացնի՝ նշելով հավանական թեման և հիմնավորելով դրա անհրաժեշտությունը: Այդ հայտադիմումի հիման վրա էլ ֆակուլտետների գիտխորհուրդները հաստատում են ասպիրանտական տեղերի հայտերը:

Ընթացիկ հարցերում՝

1. **ԼՍԵՑԻՆ** – ԵՊՀ Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ Ամալյա Հունանի Հարությունյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ա. Սարգսյանը, Ա. Տեր-Մինասյանը, Թ. Տոնոյանը:

Նշվեց, որ ուսանողուհին ավարտել է «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագիրը գերազանց առաջադիմությամբ: Ուսանողուհու գիտական հետաքրքրությունների շրջանակը հաշվի առնելով՝ ամբիոնը ատենախոսության թեմա է առաջադրում «Գրաբար - միջին հայերեն - արևմտահայերեն փոխանցումները անվանական համակարգում», իսկ գիտական ղեկավար՝ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ .գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Ամալյա Հունանի Հարությունյանի ատենախոսության թեմա հաստատել «Գրաբար - միջին հայերեն - արևմտահայերեն փոխանցումները անվանական համակարգում» Ժ 02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

2. Ամալյա Հարությունյանի գիտական ղեկավար նշանակել հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ .գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյանին:

2. ԼՍԵՑԻՆ – ԵՊՀ Հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ Արևիկ Գառնիկի Խամոյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ., պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ա. Սարգսյանը, Մ. Ֆալակյանը, Թ. Տոնոյանը:

Նշվեց, որ ուսանողուհին ավարտել է «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագիրը գերազանց առաջադիմությամբ: Ուսանողուհու գիտական հետաքրքրությունների շրջանակը հաշվի առնելով՝ ամբիոնը ատենախոսության թեմա է առաջադրում «Թվային գովազդի լեզուն», իսկ գիտական ղեկավար՝ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ .գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Արևիկ Գառնիկի Խամոյանի ատենախոսության թեմա հաստատել «Թվային գովազդի լեզուն» Ժ 02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

2. Արևիկ Խամոյանի գիտական ղեկավար նշանակել հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ .գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյանին:

3. ԼՍԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող «Արդի արևելահայերենի քերականական ուսումնական բառարան» (ղեկավար՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Յու. Ավետիսյան) թեմայի ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Մ. Ֆալակյանը, Ա. Սարգսյանը, Ա. Տեր-Մինասյանը, Թ. Տոնոյանը և ուրիշներ:

Նշվեց, որ թեմայի իրականացման երրորդ տարվա առաջին երկու եռամսյակները եղել են բառարանի կազմման աշխատանքները ամբողջացնելու ժամանակահատվածներ: Բառարանում ներկայացված է մոտ 4000 բառի ձևաբանական ամբողջական նկարագրություն: Բառարանային նյութը ընտրված է ժամանակակից արևելահայերենի գործածական և հիմնականում ձևակազմության մեջ որոշակի դժվարություններ ներկայացնող բառերից: Բառարանն ունի ընդարձակ նախաբանը, որում հստակեցվում և պարզաբանվում են բառարանի կազմման սկզբունքներն ու չափանիշները, քանի որ այս

բառարանում առանձին բառերի և դրանց առանձին քերականական հատկանիշների վերաբերյալ արձանագրված են ավանդաբար ընդունված և գրքից գիրք մեխանիկորեն փոխանցված տեսակետներից տարբեր տեսակետներ: Թեմայի իրականացման վերջին եռամսյակում կազմակերպվել են հրատարակչական գործընթացին վերաբերող ընթացակարգերը: Արդեն սեղանին է գիտական թեմայի վերջնարդյունք հանդիսացող բառարանը: Այն կարևոր ներդրում է հայ քերականագիտության մեջ, քանի որ արտացոլում է լեզվում տեղի ունեցող տեղաշարժերը և նոր մոտեցումներով ու սկզբունքներով է ներկայացնում քերականական շատ իրողություններ: Բառարանը նախատեսվում է բանասերների, ուսուցիչների, ուսանողների, բարձր դասարանների աշակերտների, առհասարակ, մտավոր աշխատանքով զբաղվողների և հասարակության լայն խավերի համար: Հաշվետու ժամանակահատվածում թեմայի առնչությամբ տպագրվել է 3 հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինան-սավորմամբ իրականացվող «Արդի արևելահայերենի քերականական ուսումնական բառարան» թեմայի ամփոփիչ հաշվետվությունը և թեման համարել կատարված:

4. ԼՍԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայի առկա ուսուցման «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Էմմա Էդուարդի Նոնինյանին «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթին մասնակցելու երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. Յու Ավետիսյանը, Ա. Գալստյանը, Ս. Ավետյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Է. Նոնինյանը ֆակուլտետի գերազանց սովորող ուսանողներից է, միշտ աչքի է ընկել գիտելիքներով, ակտիվությամբ, եղել է ուսխորհրդի ակտիվ անդամ, վայելում է ուսանողների և դասախոսների սերն ու հարգանքը: Նա միանգամայն արժանի է լավագույն ուսանող ճանաչվելու:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայի առկա ուսուցման «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Էմմա Նոնինյանին երաշխավորել մասնակցելու «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթին:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ